ՆԱԽԱԳԻԾ-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

_____2022թ. №_____-Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՈՂԱՄԱՍՆ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Որպես նվիրատվություն ընդունել Երևան քաղաքի Նոր Խարբերդի 29-րդ փողոցի հ.19 հասցեում գտնվող 0.06 հա մակերեսով հողամասը:
2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ Լիլիթ Հովհաննիսյանի հետ կնքել նվիրատվության պայմանագիր:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ.ՍԱՐԳՍՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

<< ՀՈՂԱՄԱՍՆ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>>
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ներկայացվող ավագանու որոշման նախագծով նախատեսվում է որպես նվիրատվություն ընդունել Երևան քաղաքի Նոր Խարբերդի 29-րդ փողոցի հ.19 հասցեում գտնվող Լիլիթ Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.10022016-01-0102 վկայական/ 0.06հա մակերեսով հողամասը:

Շենգավիթ վարչական շրջանը համարվում է Երևան քաղաքի ամենախիտ բնակեցված վարչական շրջաններից մեկը, իսկ վարչական շրջանի Նոր Խարբերդ թաղամասում անհրաժեշտություն կա հիմնելու նախադպրոցական ուսումնական հաստատություն, քանի որ թաղամասում բնակվող մինչև 6 տարեկան շուրջ 450 երեխաներ հնարավորություն չունեն հաճախել մանկապարտեզ՝ դրա բացակայության պատճառով:

Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասը Լիլիթ Հովհաննիսյանի կողմից Երևան համայնքին որպես նվիրատվություն տրամադրվող հողամասին անմիջապես կից է, որոնց միավորման արդյունքում միայն հնարավորություն կառաջանա քննարկել տվյալ հատվածում նախադպրոցական տարիքի երեխաների համար նախատեսված հասարակական դաստիարակության հիմնարկ /մանկապարտեզ/ կառուցելու հարցը՝ ապահովելով վարչական շրջանի Նոր Խարբերդ թաղամասի համաչափ զարգացումը:

Հաշվի առնելով քննարկվող հատվածում նախադպրոցական ուսումնական հաստատության բացակայությունը և բնակիչների խնդրանքը, ինչպես նաև քննարկվող տարածքում մանկապարտեզ հիմնելու համար ստեղծված բարենպաստ պայմանները, մշակվել է Երևան քաղաքի ավագանու նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ.ՍԱՐԳՍՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<< ՀՈՂԱՄԱՍՆ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու <<Հողամասն որպես նվիրատվություն ընդունելու մասին>> որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<<ՀՈՂԱՄԱՍՆ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու <<Հողամասն որպես նվիրատվություն ընդունելու մասին>> որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ.ՄԱՐԳՍՅԱՆ